ՀՐԱՄԱՏԻՏ

Զրամախութեան մի միակ ոչ բուժիչ, այլ զգուշացուցիչ դեղն, որ ուսումն կարենայ գտած ըլլալ, հրաշէկ երկաթով խարելն է։ Վերքն խարելու համար անմիջապէս երկաթոյ կտոր մը և բորբոքեալ հուր գտնալն միշտ դիւրին չէ, և մանաւանդ յաճախ կը հանդիպի որ դարմանն խածուածէն շատ ժամանակ վերջը կը գործադրուի։ Արդ պէտք չէ մոռնալ, որ վերքին մէջ ջրախոյս կենդանւոյն ակռաներէն պատուաստեալ կատաղի թարախը (virus) ջնջելու հաւականութիւնն կը նուազի, և որ դեռ չարագոյն է բոլորովին կ'անհետանայ՝ եթէ խածուածին և խարելուն մէջի ժամանակը երկայնի։

Մոզէր բժիշկն, շատ մը անձանց խնդրանաքը աչխատեցաւ, ջանաց և գաղափարեց խարիչ և առձեռն գործի մը, դիւրին 'ի գործածութեան և այնպէս պարզ որ բժիշկներն, դեղավաճառք, որսորդք, ճանապարհորդք և ընդհանրապէս այն ամենայն անձինք, որոնք մերձակայ վտանգին մէջ են՝ կը-նան գործածել։

Հրամատիտ (փակուած)։

Այս գործին սեպհական բաղադրութեամբ փոքր ածխոյ գլանէ մը կը բաղկանայ և լուցափայտի բոցին չշփմամբը կը բորբոքի։ Այն ածուխը սպիտակագոյն հրաշէկ կ'ըլլայ խածուածին վերքն մաքրելու ժամանակ. և ընդերակներն ճնշելով՝ ապականեալ արիւնն կը քամէ, և երբոր ծայրն բորբոքած է, փութով վերքին վրայ պէտք է դնել, խարու�մի վայրկենի մէջ կ'արդիւնաւորի. և համբերողն միայն անցողական կիզման տպաւորութիւնն կ'ընդունի, վասն զի ցաւին վրայ դեռ պայծառ գաղափար մ'առնելէն առաջ՝ գործողութիւնն լմնցած է։

Հրամատիտն փայտեայ կամ մետաղեայ երախակալի մը հետ միացած է և խուսին ամրացուցուած է պտուտակով մը որ բախիւնէ և կոտրիլէ կը պահպանէ։ Հուսկ յետոյ այս գործին մետաղէ շրջապատեալ մատիտէ մը տարբերութիւն չունի, ոչ աւելի է և ոչ նուազ ծանրութեամբ, և 'ի գրպանն դիւրաւ կը տարուի։



Հրամատիտ (բացուած և վառուած)։

Մոզէր բժշկին հրամատիտը մեծ ընդունելութիւն գտաւ հիպոկրատեան ընկերութիւններէ և հիւանդանոցներէ։ Բարիզու քաղաքատեսչութիւնն բժշկական և վիրաբուժական տուները մտցուց. և բազում քաղաքատեսչութիւնք սոյն օրինակին նմանեցան։

Երևելի հնարողն այսպէս հետևեալ բառերով կը համառօտէ հրամատիտին գործադրութիւնը։

« Առաջին խնամքն պէտք է ազդու և արագ ըլլայ։ եթէ վերքն բաղկին կամ

Հրամատիտ. — Իշխանակ գործածելոյ։

սրունքին վրայ է, պէտք է քիչ մը հեռու սեղմելով կապել. ապա վերքէն արիւնը

հանելու համար ճզմել, և եթէ հարկաւոր ըլլայ բանալ կամ՝ սրուակն գործածել։ Նոյն ժամանակը հրամատիրը պէտք է բորբոքել, և ապա առանց դանդաղելու շատ անգամ և խորագոյն կերպով բովանդակ վէրքն խարել։ Ապա պէտք է կոսաւի կտորներով վէրքին վրայ ոգիք կամ Գալոնիոյ ջուր դնել և չանալ առատ քրտնիլ։

Թունաւոր օձերու խածուածքին, անդամահատական վէրքերու, միասակաւ պատարի՝ մի և նոյն կերպն կը գործածուի »։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԳԱՑ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆ

Ի ԺՈՂՈՎՆ ՎԵՆԵՏԿՈՑ

(Տես Հա. Լիթ. Պր. Դ. էջ 369)։

Անգղիական Աշխարհահանդիսին մէջ կար ամենողմային օդաչափ և նշանակիչ հողմաչափ, երկուքն ալ՝ ի գործածութեան։ Ապա բազում դէռոնդիոք, յորոց մին՝ մեծագոյնն՝ չինեալ՝ ի Դրուխտոնէ և ի Սիմմէ ընդ հրամանատարութիւն Էվերէսթի ապայի՝ ի 1827է մինչև ց1830։ Հնդկաստանի 500 կայարանք, եռանկիւնաչափութեան 1800 անկիւնք և ծովուն մակերևութէ 5000 ոտք բարձրութիւն տեղուանք չափուած են այս գործովք։ Ընթերցողաց գաղափար տալու համար — գործին 500 լիտր կը կշռէ, հեռադէտը 250, խարիսխն 240, ընդ ամենը 1050 անգղիական լիտր։ — Բաց՝ ի սոցանէ, շրջանակք մագնիսական շեղումանց, օդաչափ մակերևոյթի և լեռանց, նշանակերն առաքողք, հարթաչափք, պրեռոտրեան տախտակք, և այլն։

Մէջբնագործք Հնդկային երկրաբաշխութեան պաշտօնարանին գործէն կրնան քննել վասն ճշգութեան, կազմութեան և մաքրութեան՝ յօգուտ իրենց արուեստին։

***

Գաղղիոյ միայն Պատերազմի պաշտօնէին երկրաբաշխական մասն դրած էր այն գործիներն՝ որք՝ ի կիր առան եռանկիւնաչափական և երկրաբանական աշխարհացուցից. յորոց գլխաւորն է առանձն միջօրէական շրջանակ մը, կազմեալ՝ ի Պրիւնէր եղբարց և՝ ի գործածեալ ճշգելու Գաղղիոյ և Աշխերիոյ լայնութեան, երկայնութեան և զենիթի անկիւններն՝ 70 անգամ մեծցընող զառարկայն. երկրորդ, ազիմուռթի կրկնիչ շրջանակն՝ ի պէտս ուղղութեանց՝ ի բարձր երկրաբաշխութեան, 40 անգամ մեծցընող զառարկայն. այս գործին ամենապարզ է, որ մանրադիտակաց շարժուն թելերու օգնութեամբ երկրաբաշխական գործեաց երկու գլխաւոր վրիպակը կը փոքրկացընէ, այսինքն ընթերցման և նպատակին ուղղութիւնն. — աշխարհահանդիսին մէջ դրուածն՝ ի գործածեալ է Պպանիոյ և Աշխերիոյ երկրաբաշխական միութեան քննութեանց մէջ։ Ցիշենք դարձեալ՝ ի մէջ այլոց՝ կրկնիչ դէռոնդիտն, հիփի դրութեամբ՝ ժամանակաչափն, երագաչափն և ընդհատիչ ժամանակաչափն և արձակիչն ելեկտրական շուռոյ, չինուած՝ ի Պարտուէ, ըստ նախագաղափարի Մանժէն հաղարապետի, Աշխերիի Պպանիոյ հետ երկրաբաշխական միութեան համար. և կատարելագործեալ է ելեկտրական ջահով մը՝ ի Սերբէնիէ։ Այս գործոյն արտադրած լուսեղէն տրցակն մեծ ձկտումն ունի։ Ասոր օգնութեամբ՝ Աշխերիոյ և

digitised by A.R.A.R.@